— Սիրտս, մտոր, ցաւ զգաց խոր եւ ոխ։ Մեռան երկու պապագալներ եւ երեք կաքաւք, որ ասեն արքայութեան։ Ամի նրանք կրծքիս վրայ, տաքացրի· կուտ դրի բերաններին, ասի· մի՛ մեռնէք, մի՛ մեռնէք, վանսդի ինձ համար ցաւ է մեծ եւ կորուստ փոդի։ Ձեղաւ, մտոր, չեղաւ։ Եւ երբ նետեցի նրանց ծովը, ջանս էլ հետը գնաց։ Կը հասկանա՞ս։

— Հասկանում եմ, անշուշտ։

— Բայց դեռ այդ ոչինչ։ Ադէնից Սուդան գնալուց, նախ շատ տաք հով փչեց, յետոյ կարծես երկինքը կարմրեց եւ հով մի կատաղի բարձրացաւ, այնքան սաստիկ, որ մտածեցի վերջն է աշխարհի։ Կայմեր ճռճռային, նաւը քիթը խոթէր ջուրը եւ ալիք բարձրանային գնաւ եւ թրջէին զթռչունք։ Ո՞ւր գնամ, ո՞ւր գնամ... ո՞ւր տանիմ ապրանք իմ... Աղօթեցի եւ նորից մարդ ղրկեցի կապտընին, մարդասիրական իր զգացմանց դիմելով։ Բայց նա՝ վա՛տ մարդ, հրէշ եւ անասուած՝ պատասխանի։ Թող տայ պապագայք երեք մեծ, թէ չէ կործանին ամենայք։ Բարկացամ։ Տա՞մ զպապագայք, տա՞մ զպապագայք... Ես փո՛ղ տուել մեծ, աշխատանք թափել եմ մեծ եւ չտա՛մ։ Ձտաս՝ չփրկենք զթռչունք։ Եւ մեռի՛ն, մտոր, մեռին նաեւ ուրիշք։ Ասեմ կարճ· երբ հասանք Պորտ Սաիդ, մնացել էին երեք թռչուններ աննշան, մէկ դեղին, մէկ գլխով կապոյտ եւ երկու արքայական։ Նայէի նրանց ինչպէս զաւակունք իմ թանկագին, իսկ նաւաստիներ ծիծաղէին անզգամ։ Բայց տես դժբախտութիւն՝ մեռի՛ն եւ նրանք երբ մոտեցանք Մալթային։ Մեռի՛ն ամենայն թրոնունք, մեռի՛ն, մտոր...

— Իսկ վանդակները ի՞նչ արիք։

— Թափեցիմ զծով, որպէսզի չօդտուին իտալայք անօրէն։

— Մնացին կոկոյք։

— Կոկո՞յք...

Մտոր հայրենակիցը յանկարծ ոտքի է կանգնում, մօտենում դրան, վերցնում անկիւնում դրած մի կապոց եւ բերում ինձ։

— Ահա, կոկոյք երեք... առէք ձեզ...

— Իսկ միւսնե՞րը։

— Միւսները խմեցին։

— Խմեցի՞ն։

— Այո՛։ Երբ աստ գնացի առնելու զպըտուղ, տեսայ, որ ամէնն էլ ծակ են։ Ճանապարհին, սաստիկ տաքի ժամանակ, նաւաստիներ իջնէին վար, ծակէին ընկոյզ եւ խմէին կաթն զովահար։ Իսկ պտուղ փչանար, եւ ես ընդմիշտ կործանէի... Ողջ էին միայն երեք հատ։ Ամի, բերի ձեզ· թող գոնէ այդ էլ հա՛յ ուտի։ Կերէք, մտոր, կերէ՛ք...

Նստում է։ Ոսկեզօծ ակնոցների հաստ ապակիների ետեւից բարակ իր աչքերը փայլում են։ Թուխ իր մորթը, մազոտ ձեռքերը, ճերմակ եղունգները բոլորովին ինձ օտար են։ Եթէ հայերէն, այն էլ այնքան ինքնուրոյն հայերէն չխօսէր, ո՞վ պիտի կարողանար նրան ճանաչել իրրեւ հայ։

Հա՛յ։

Մեր երազները, ծովեր անցնող եւ մրրիկի հարուածների տակ մեռնող, գունագեղ, արքայական թութակների այս վախճանը չունի՞ն։

Անիից՝ Բէնարէս, Կալկաթա, Բոմբէյ։

— Անդ ունիմք եկեղեցի եւ դպրոց ունիմք...

Փողոցում աշունը վայում է։

Բանջարեղէն ծախող կնոջ ձայնը՝ հաստ, խոպոտ եւ լալկան՝ խառնուում է աշնան, բարձրանում եւ փչոր գալիս։

Ցիշում եմ.—

Սենեակում արդէն մութ էր, պատուհանի վերը դեղին մի լոյս էր նստել եւ մենք լուռ էինք։

* * *

Բազիլիկան բոց էր եւ երգ։

Պատերի սրբերի խմբերը ման էին գալիս ոսկեզօծ դաշտերում։

Աստուածաշունչը, բիւզանդական լայն քղամիդների տակ, անհանդիստ շարժում էր իր նիհար մարմինը· զսպում իր ողբերգութիւնը, գալարում իր պատմութեան ահեղ դէպքերը եւ դմբէթից վայր թափուող աղօտ լոյսերի տակ՝ կուչ գալիս, տափակ դէմքերով պատերին կպչում, բոլորուում սիւների շուրջը, սողում կամարների վրայից։

Սրբերի ոսկէապատ աչքերում կայծկլտող